

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

(2016-2021թթ.)



**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.**

**Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան կամ ԳՊՀ) 2016-2021 թվականների հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը** Համալսարանի 2016-2021 թվականների ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասն է, որը միտված է բուհի՝ որպես ժողովրդավարական սկզբունքներ որդեգրած բաց, թափանցիկ հաստատության զարգացման ապահովմանը:

**II. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի նպատակն է.**

Համալսարանի հակակոռուպցիոն կառուցակարգերի ամրապնդումն ու զարգացումը, բարեվարքության կանոնների արմատավորումը, ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորումը, ուսանողների բարոյական, իրավական պատշաճ դաստիարակությունը:

**III. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի խնդիրն է.**

Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունների և սկզբունքների ամրագրումը, հակակոռուպցիոն միջոցառումների նախատեսումը, ակնկալվող արդյունքների հստակեցումը, կոռուպցիոն երևույթների ու վտանգների բացահայտումն ու կանխումը:

**IV. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի  
հիմնական սկզբունքներն են .**

- 1) Օրինականություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն  
Համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում,

- 2) Իրավահավասարություն, ըստ որի Համալսարանի բոլոր ուսանողները, դասախոսները, տարբեր տարակարգերի աշխատակիցները, այլ ներքին և արտաքին շահառուները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով,
- 3) Մարդու իրավունքների և ազատությունների առաջնահերթություն, հարգանք բոլորի պատվի և արժանապատվության, անձնական և գույքային իրավունքների նկատմամբ, մարդու իրավունքների և օրինական շահերի խախտումների կանխում,
- 4) Սոցիալական պատասխանատվություն, համաձայն որի Համալսարանի ղեկավար կազմը, բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները բարոյական և իրավական պատասխանատվություն են կրում ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման և դրանց արդյունավետության ապահովման համար:

**V. Համալսարանի հակակոռուպցիոն քաղաքականության  
հիմնական ուղղություններն են .**

- 1) Կոռուպցիոն վտանգների բացահայտում և կանխում՝ ուսումնական գործընթացի բոլոր փուլերում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի կանխատեսում, օբյեկտիվ գնահատում և դրանց նվազեցմանն ու հաղթահարմանը ուղղված միջոցների ձեռնարկում,
- 2) Ակադեմիական ազնվության նորմերի և բարեվարքության կանոնների արմատավորում,
- 3) Կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում, կոռուպցիայից զերծ կրթական միջավայրի ապահովում,
- 4) Համալսարանի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ժողովրդավարական սկզբունքների պահպանում, որոշումների ու հրամանների հստակ կատարում, Համալսարանում ուղղահայաց՝ վերնից ներքև և ներքևից վերև, ինչպես նաև հորիզոնական ուղղություններով համագործակցության, հաշվետվողականության և վերահսկողության կառուցակարգերի կատարելագործում:

- 5) Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրագործման անդրդվելի կամքի, վճռականության ու պատրաստակամության դրսևորում,
- 6) ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն, հակակոռուպցիոն միջոցառումների մասնակցային իրագործում և դրանց արդյունավետության ապահովում:

## **VI. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը ներառում է հետևյալ միջոցառումները.**

1) Համալսարանի կառավարման արդյունավետության բարձրացում, թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ապահովում, Համալսարանում վարչարարության շարունակական բարելավում, «միջնորդ» օղակների դերակատարության բացառում, ուսանողների, ծնողների և դասախոսների հարցերին օպերատիվ ու անմիջական պատասխանում, համալսարանում «մեկ պատուհանի» սկզբունքով դիմումների ընդունում ու պարզաբանումների կատարում:

2) Կոռուպցիոն վտանգների բացահայտման և կանխարգելման նպատակով խիստ հսկողության իրականացում հետևյալ գործընթացների նկատմամբ.

ա/ուսանողների ընդունման, տարկետման, ազատման, հեռացման և վերականգնման գործընթացներ,

բ/ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննություններ,

գ/ուսանողների անվճար և վճարովի ուսուցման տեղերի փոխատեղումներ /ռոտացիա/,

դ/ ամփոփիչ ատեստավորման քննություններ,

ե/ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանություններ,

զ/ ուսանողների սոցիալական աջակցության ծրագրեր,

է/ կրթության առաջին մակարդակից՝ բակալավրիատից ուսանողների անցում հաջորդ մակարդակին՝ մագիստրատուրային,

ը/ ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրեր,

թ/սովորողների ներբուհական և միջբուհական տեղափոխություններ,

ժ/ Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեություն:

3) Համալսարանի գործունեության վերաբերյալ բաց տեղեկատվության լիարժեք հասանելիության ապահովում՝ ԳՊՀ համացանցային՝ [www.gsu.am](http://www.gsu.am) կայքի և այլ ձևերով համակողմանի, ամբողջական, արժանահավատ և մատչելի տեղեկատվության տրամադրման միջոցով, տեղեկատվության տրամադրման պատասխանատուների, ընթացակարգերի և ժամկետների հստակ սահմանում, դրանց խախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցների նախատեսում և կիրառում:

4) Համալսարանում էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների՝ էլեկտրոնային հարցումների և գնահատումների, առցանց քվեարկությունների և քննարկումների, առաջարկությունների և խնդիրների լուծման տարբերակների ներկայացման, որոշումների մասնակցային ընդունման նոր կառուցակարգերի կիրառում:

5) Կրթության որակի բարձրացում՝ ապահովելով ուսուցման (դասավանդման) և ուսման (ուսումնառության) պատշաճ որակ, կրթության բովանդակության հարստացում, ուսուցման մեթոդների բազմազանեցում, ուսանողների մոտ ուսման նկատմամբ հետաքրքրության առաջացում, գիտելիքների շարունակական ձեռքբերման կարևորության գիտակցման արմատավորում:

6) Կրթական ծառայությունների մատուցման որակի չափանիշների հստակեցում, կրթության ելքային արդյունքների սահմանում և իրականացում, կրթական բոլոր աստիճաններում որակի մշակույթի ձևավորում:

7) Կրթական ծառայությունների մատուցման գործընթացի մշտադիտարկում, կրթության որակի վերաբերյալ ուսանողների բավարարվածության աստիճանի պարզում, սովորողների կողմից կրթության և կրթական արժեքների կարևորության ընկալման մակարդակի գնահատում և շարունակական բարձրացում:

8) Ուսումնական գործընթացի կարգավորման կառուցակարգերի շարունակական բարելավում, բոլոր փուլերի պատշաճ վերահսկողության և մշտադիտարկման ապահովում:

9) Համալսարանի մասնակցային կառավարման և հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման գործում ուսանողական ինքնակառավարման մարմինների դերի շարունակական բարձրացում, արդյունավետ համագործակցության նոր հարթակների

ձևավորում, ուսանողների ներգրավում համալսարանական բոլոր կարևոր խնդիրների լուծման գործընթացներին:

10) Ուսանող-դասախոս փոխհարաբերությունների նոր մոդելների ներդրում, բարիդրացիական գործընկերային հարաբերությունների ձևավորում, փոխադարձ հարգանքի վրա խարսխված ստեղծագործ աշխատանքային մթնոլորտի ապահովում:

11) Համալսարանի ուսանողների շրջանում առողջ մրցակցային միջավայրի ստեղծում, անվճար և վճարովի հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման (ռոտացիայի) իրականացում՝ հրապարակայնության, օբյեկտիվության և արդարության սկզբունքներով:

12) Ուսանողների մեջ օրինականության, օբյեկտիվության, սոցիալական արդարության սկզբունքների խորքային ընկալման և կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի արմատավորում, կրթական գործընթացի կոռուպցիոն վտանգներ պարունակող փուլերի նկատմամբ ուսանողական վերահսկողության իրականացում, ուսանողների հակակոռուպցիոն ներուժի օգտագործում:

13) Համալսարանի կորպորատիվ արժեքներմատիվային համակարգի, գաղափարախոսության, սկզբունքների ու աշխատանքի ամրապնդում, ներհամալսարանական հարաբերությունների հստակ կանոնակարգում, արտահամալսարանական կապերի ու առնչությունների ընդհանուր նորմերի սահմանում, ծագած բոլոր խնդիրների արդարացի և օպերատիվ լուծում:

14) Համալսարանի աշխատակիցների պաշտոնների նկարագրերի կազմում ու հաստատում, նրանց գործունեության սահմանափակումների ամրագրում, աշխատանքի խրախուսման և շահադրդման (մոտիվացիայի) համակարգի բարելավում:

15) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային կարողությունների զարգացում, նրանց գործունեության արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության ապահովում, աշխատանքի արդյունքների գնահատման նոր չափանիշների ներդրում:

16) Համալսարանի բոլոր մարմինների գործառույթների հստակ սահմանում, ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքի վերաբերյալ հիմնավորված և արժանահավատ հաշվետվությունների պարբերաբար ներկայացում:

17) Համալսարանի ֆինանսական գործունեության, ծախսերի կատարման, գնումների իրականացման գործընթացների օրինականության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

18) Համալսարանի ներքին աուդիտի կառուցակարգերի կիրառում, աուդիտորական եզրակացության հրապարակայնության ապահովում և եզրակացությունից բխող անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում:

19) Համալսարանի ուսանողներից, ծնողական համայնքից, այլ անձանցից տեղեկատվության ստացում ու վերլուծություն, եզրահանգումների կատարում և համապատասխան միջոցների ձեռնարկում, հետադարձ կապերի ակտիվացման արդի կառուցակարգերի ներդրում:

20) Ստացված յուրաքանչյուր ահազանգին օպերատիվ արձագանքում, ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգով անընդունելի համարվող արարքների բացահայտում ու կանխում:

21) Համալսարանում կատարողական կարգապահության, աշխատանքային բարեխղճության և պատասխանատվության բարձրացում:

22) Համալսարանում վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի բոլոր անդամների, ուսանողների կողմից բարեվարքության կանոնների պահպանումը գնահատող կառուցակարգերի ներդրում, անթույլատրելի արարքների անցանկալի հետևանքների պարզաբանում և կանխում:

23) ՀՀ օրենսդրությամբ կոռուպցիոն որակվող իրավախախտումների դեպքում կարգապահական և վարչական պատասխանատվության համարժեք միջոցների կիրառում, իսկ կոռուպցիոն հանցագործությունների դեպքում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով դիմում իրավասու մարմիններին:

24) Համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում կոռուպցիայի հասկացության, էության, պատճառների ու պայմանների, սուբյեկտների, հետևանքների, կոռուպցիոն երևույթների կանխարգելման թեմաներով ուսուցման կազմակերպում, Համալսարանի դասախոսների և ուսանողների ուժերով հանրային իրազեկում, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերի դրույթների, ՀՀ օրենսդրության նորմերի հանրամատչելի ներկայացում ու պարզաբանում:

25) ԳՊՀ ուսանողների և դասախոսների, բոլոր աշխատակիցների հակակոռուպցիոն իրազեկության մակարդակի բարձրացում, մասնակցություն կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված հանրապետական և միջազգային գիտաժողովներին, «Կլոր սեղաններին», բանավեճերին ու քննարկումներին:

26) Ուսանողների շրջանում անանուն հարցումների պարբերաբար իրականացում՝ միտված կոռուպցիոն վտանգների հայտնաբերմանն ու հաղթահարմանը: Կոռուպցիոն դրսևորումների բացահայտմանն ուղղված հարցումների անցկացման մեթոդաբանության ու ընթացակարգերի կատարելագործում:

27) Համալսարանի կանոնակարգերի և ընթացակարգերի, բուհական գործընթացների բոլոր փուլերի հակակոռուպցիոն փորձաքննության անցկացում, ԳՊՀ ակտերի նախագծերի հրապարակման էլեկտրոնային հարթակի ստեղծում և առցանց քննարկումների կազմակերպում, դրանց արդյունքների հաշվառում:

28) Համալսարանի հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատանքների ակտիվացում, համագործակցություն հանրապետական և մարզային ՋԼՄ-ների հետ, հասարակության մեջ ԳՊՀ-ի՝ որպես հակակոռուպցիոն պայքարի ջատագով բուհի նկատմամբ վստահության ամրապնդում:

29) ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքի պարբերական մշտադիտարկում և գնահատում՝ առաջացած խնդիրներն ու ռիսկերը բացահայտելու և կանխելու նպատակով:

30) Կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձի ուսումնասիրում, վերլուծություն և տեղայնացում, կոռուպցիայի կանխարգելման ընդունված գործիքների հետևողական կիրառում: